Հավելված 2
2023թ. «01» «26»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼՄՏ-7/23 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼՄՏ-7/23

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանումը՝	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում. Տաշիր
Դրամաշնորհի N	N ԴՏՊ-1160-11012/ԼՄՏ-7/23
Դրամաշնորհատու կազմակերպություն	«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակատված	01.01.2023 – 31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	01.01.2023 – 31.12.2023
Ներկայացման օր	17.01.2024
Հաշվետվության պատասխանատու	Գոհար Գևորգյան Գործառնական տնօրենի պարտականությունները կատարող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

Միջոցառում 1. Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
Միջոցառում 2. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
Միջոցառում 3. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
Միջոցառում 4. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
Միջոցառում 5. ՁԼՄ լուսաբանում և հանրային միջոցառումներ
Միջոցառում 6. Տուն այցերի /շարժական կամ մոբիլ ծառայություն /կազմակերպում հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար:
Միջոցառում 7. Ազատ ժամանցի և մշակույթային միջոցառումների կազմակերպում
Միջոցառում 8. Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
Միջոցառում 9. Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
Միջոցառում 10. Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Միջոցառում 1. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **30** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարած է:

Միջոցառում 2. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **30** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրեր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 3. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **30** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 4. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են կոլաժաթերապիայի, ապլիկացիաների պատրաստման, նկարչաթերապիայի և արտթերապևտիկ այլ խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 5.

- 06.02.2023թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ն «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում կազմակերպեց «Սպորտ՝ բոլորի համար» միջոցառումը: Միջոցառման ընթացքում Լոռու մարզի հաշմանդամություն ունեցող թվով 17 շահառու ծանոթացան բոչիա, անվասայլակով բասկետբոլ և կույր ֆուտբոլ ադապտիվ սպորտաձևերի հետ, այնուհետև մասնակցեցին ընկերական և մրցաշարային խաղերին: Գործողություն 5-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:
- 01.06.2023թ -ին կենտրոնի շահառուները մասնակցեցին Տաշիրի քաղաքային հրապարակում կազմակերպված Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառմանը:
- 24-25.23.2023թ-ին Հայաստանի բոչիայի ազգային ասոցիացիայի նախաձեռնությամբ Քրոսս Առողջության Կենտրոնում կայացավ «Հայաստանի բոչիայի ազգային առաջնություն 2023»-ը, որին իրենց մասնակցությունը ունեցան նաև «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Լոռու թիմը, ով խմբային մրցաշարում զբաղեցրեց երրորդ հորիզոնականը:

Միջոցառում 6. Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի թվով **3** շահառուներ մասնակցել են ֆիզիկական ակտիվության դասընթացների ներառական մարզասրահում: Գործողություն 6-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 7.

- 27.10.2023 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և Հայկական Կարիտասի «Փոքրիկ Իշխան» կազմակերպությունների համագործակցությամբ Տաշիրի թիվ 2 միջնակարգ դպրոցում կազմակերպվել է «Սպորտալանդիա», որին իրենց մասնակցություն են ունեցել կենտրոնի թվով 9 շահառու:

Միջոցառում 8. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով հետևյալ սեմինարները կենտրոն հաճախող շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար՝

- 13.03.2023- սեմինարի թեմա՝ «Տարբեր տարիքի երեխաների միջանձնային փոխհարաբերությունները», սեմինարը վարեց կենտրոնի հոգեբան Արփինե Մկրտչյանը: Մասնակիցների թիվ՝ 12:
- 14.03.2023 սեմինարի թեմա՝ «Տարբեր տարիքի երեխաների միջանձնային փոխհարաբերությունները, և դրանք առանձնահատկությունները» սեմինարը վարեց կենտրոնի արտթերապիստ՝ Մարինե Մեսրոպյանը: Մասնակցիների թիվ՝ 12:
- 17.03.2023 - սեմինարի թեմա՝ «Լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները երեխաների հետ աշխատանքում»: Սեմինարը վարեց կենտրոնի լոգոպեդ՝ Ադրինե Սողոյանը, մասնակցիների թիվ՝ 13:
- 20.06.2023 Սեմինարի թեման՝ «Հեքիաթի ընթերցում: Տպավորիչ դրվագների պատկերում»: Սեմինարը անցկացրել արտթերապիստ՝ Մ. Մեսրոպյանը: Մասնակցել են 12 ծնող:
- 26.06.2023 Դասընթացի թեմա՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ տարվող մանկավարժահոգեբանական աշխատանքների առանձնահատկությունները»: Սեմինարը անցկացրել է հատուկ մանկավարժ՝ Ա.Աթանյանը: Մասնակցել են 9 ծնող:
- 30.06.2023 Սեմինարի թեման՝ «Խոսքի զարգացման տարիքային առանձնահատկությունները: Խոսքի խանգարումների տեսակները»: Սեմինարը անցկացրել լոգոպեդ՝ Ա. Սողոյանը: Մասնակցել են 10 ծնող:
- 24.07.2023 Սեմինարի թեմա՝ «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» վարել է Ա. Սողոյանը: Մասնակցել են 11 ծնող:
- 13.09.2023 Սեմինարի թեմա «Հնչարտաբերման խանգարումների տեսակները և տարածվածությունը դպրոցահասակ երեխաների մոտ» վարել է Ա. Սողոյանը: Մասնակցել են 8 ծնող:
- 18.09.2023 Սեմինարի թեմա-«Երեխաների հանդեպ բռնության կանխարգելու և արձագանքում» վարել է Ա.Մկրտչյանը: Մասնակցել են 15 ծնող:
- 20.09.2023 Սեմինարի թեման «Նևրոզներն ու վախերը երեխաների մոտ»: Վարել է Ա.Մկրտչյանը:Մասնակցել են 9 ծնող:
- 25.09.2023 Սեմինարի թեմա՝ «Գրելու, կարդալու հետ կապված դժվարությունները: Ինչպես օգնել երեխային» վարել է Ա. Աթանյանը: Մասնակցել են 12 ծնող:
- 1.11.2023թ, սեմինարի թեմա՝ «Երեխան ճգնաժամային իրավիճակում: Ճգնաժամերի հաղթահարում»: Սեմինարը վարել է հոգեբան Ա.Մկրտչյանը, մասնակցել են 8 ծնող:

- 14.11.2023թ սեմինարի թեմա՝ «Ծնողների-երեխա միջանձնային հարաբերություններ»: Սեմինարը վարել է լոգոպեդ՝ Ա.Սողոյանը, մասնակցել են 8 ծնող:
- 04.12.2023թ-ին թեմա՝ «Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների նախադպրոցական, դպրոցական և մասնագիտական ուսուցումը»: Վարող՝ Ա.Աթանյան: Մասնակցել են 6 ծնող:
- 01.12.2023թ-ին թեմա՝ «Ինչպես վարել առողջ ապրելակերպ»: Վարող՝ Ս.Աբրահամյան: Մասնակցել են 7 ծնող:

Գործողություն 8-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 9. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 9/ հաշվետու ժամանակահատվածում թվով **47** քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, ինչպես նաև պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 9-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 10. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 6/ կենտրոնի թվով **1** շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝

Ստորև ներկայացվում է կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/189754026371003

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար

- 27.02.2023թ-ին կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ադրինե Սողոյանը մասնակցել է միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստին:
- 10.03.2022 թ-ին կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցել է Կարմիր Խաչի Հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված «Արտակարգ իրավիճակում առաջին օգնության կազմակերպման» 8 ժամյա տեսագործնական դասընթացին:
- 28.03.2023թ-ին կենտրոնի համակարգող - սոցիալական աշխատող՝ Ադրինե Սողոյանը մասնակցել է միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստին:

- 01.04.2023թ-ին կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ադրինե Սողոյանը մասնակցել է միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստին:
- 26.05.2023թ կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ադրինե Սողոյանը մասնակցել է միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստին:
- 29.06.2023թ կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ադրինե Սողոյանը մասնակցել է միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի նիստին:
- 27.10.2023թ «Լիարժեք կյանք: ՀԿ-ի համակարգող Ա.Հակոբյանը և հոգեբան Ա.Մկրտչյան մասնակցել են Միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի հերթական նիստին:
- 29.11.2023թ կենտրոնի համակարգող Ա.Հակոբյանը և հոգեբան՝ Ա.Մկրտչյանը մասնակցել են ՄՍԾ Տաշիրի տարածքային կենտրոնի հերթական նիստին:
- 28.12.2023թ կենտրոնի համակարգող Ա.Հակոբյանը մասնակցել են ՄՍԾ Տաշիրի տարածքային կենտրոնի հերթական նիստին:

Գործառնական տնօրենի պարտականությունները կատարող Գ.Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ Նախագահ Ս.Մաղաքյան

Digitally signed by MAGHAKYAN SUREN 3312720087
Date: 2024.01.17 18:05:21 AMT